ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» դեկտեմբերի 2011թ. **N-Ն**

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ և 42-րդ հոդվածներով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշմամբ հաստատված.

1) Ծախսերի գումարն նվազեցնել 25,000.0 հազար դրամով,
2) դեֆիցիտի (պակասուրդի) գումարը նվազեցնել 25,000.0 հազար դրամով։

2.Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշմամբ հաստատված NN 2, 3, 4, 5, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-6 հավելվածների։

3.«Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության տեղաբաշխված10000 դրամ անվանական արժեքով 100 հատ հասարակ բաժնետոմսերի՝ դիմաց 1,000.0 հազար դրամ վճարումը կատարել Երևանի քաղաքի 2011 թվականի բյուջեով սույն որոշմամբ նախատեսված հատկացումների հաշվին։

4.«Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը լրացուցիչ 2400 հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով ավելացնել 24,000.0 հազար դրամով՝ այն սահմանելով 25,000.0 հազար դրամ, որից հետո հասարակ (սովորական) բաժնետոմսերի ընդհանուր թիվը կդառնա 2500 հատ, յուրաքանչյուրը՝ 10000 դրամ անվանական արժեքով՝ վճարումը իրականացնելով Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեով սույն որոշմամբ նախատեսված հատկացումների հաշվին։

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով նախատեսվում է «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ընկերություն) կանոնադրական կապիտալը սահմանել 1,000.0 հազար դրամ, որը համապատասխանում է 100 հասարակ բաժնետոմսի՝ յուրաքանչյուրը 10000 դրամ անվանական արժեքով: «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ընկերության հիմնադրման ժամանակ նրա բաժնետոմսերը պետք է լրիվ վճարվեն մինչև ընկերության պետական գրանցումը, ինչն էլ հաշվի առնելով սույն որոշման նախագծով նախատվում է նշված գումարը հատկացնել՝ վճարումներն իրականացնելու նպատակով:

Միաժամանակ, նախատեսվում է սույն որոշման նախագծով ավելացնել ընկերության բաժնետոմսերի թիվը՝ 2400 հատով, 24,000.0 հազար դրամ ընդհանուր արժեքով, ավելացնելով կանոնադրական կապիտալը՝ դարձնելով 25,000.0 հազար դրամ և հասարակ (սովորական) բաժնետոմսերի թիվը՝ 2500, 10000 դրամ անվանական արժեքով:

Հաշվի առնելով վերոգրյալը, նշված վճարումներն իրականացնելու նպատակով սույն որոշման նախագծով նախատեսվում է համապատասխան փոփոխություններ կատարել Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեում:

Ելնելով վերոգրյալից Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի վճարման, կանոնադրական կապիտալն ավելացնելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի վճարման, կանոնադրական կապիտալն ավելացնելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 169-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի վճարման, կանոնադրական կապիտալն ավելացնելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի քաղաքի բյուջեի ծախսերն ու դեֆիցիտը (պակասուրդը) նվազեցվում են համապատասխանաբար 25,000.0 հազար դրամով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ